ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ՝ ԿԱՆԱՆՑ և ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՎԱՍԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ և ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԴԻՏԱՆԿՅՈՒՆԻՑ

Ազգային ժողով- ՔՀԿ համագործակցության հարթակի հանդիպման

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Սույն թվականի սեպտեմբերի 8-ին տեղի ունեցավ Ազգային ժողով-քաղաքացիական հասարակություն հարթակի հերթական հանդիպումը, որը նվիրված էր Պեկինի հռչակագրի և Գործողությունների ծրագրի՝ **«Կանանց կրթությունն ու մասնագիտական պատրաստումը»** մտահոգության ոլորտին, ինչպես նաև COVID-19 համավարակով պայմանավորված կրթության ոլորտի արդի մարտահրավերներին՝ դիտարկելով հիմնահարցը կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման տեսանկյունից:

Հանդիպմանը մասնակցեցին Ազգային ժողովի պատգամավորներ, Կառավարության և պետական կառույցների ներկայացուցիչներ, քաղհասարակության ներկայացուցիչներ, փորձագետներ:

Հանդիպումն իրականացվում էր «Նոր Հայաստան՝ ժամանակակից խորհրդարան» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի կողմից՝ ՀՀ Ազգային ժողովի, ՕքսԵՋեն հիմնադրամի, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, Ժողովրդավարության Վեսթմինսթր հիմնադրամի հետ

համագործակցությամբ: Ծրագիրն իրականացվում է Միացյալ Թագավորության «Լավ կառավարման հիմնադրամ»-ի և Շվեդիայի կառավարության օժանդակությամբ:

Հանդիպմանը փորձագետ Լիլիթ Զաքարյանը ներկայացրեց Հայաստանում Պեկինի հռչակագրի և Գործողությունների ծրագրի՝ **«Կանանց կրթությունն ու մասնագիտական պատրաստումը»** մտահոգության ոլորտին վերաբերող այլընտրանքային վերլուծությանզեկույցը: Զեկույցը ներկայացնում է վերջին հինգ տարիների ընթացքում կրթության և մասնագիտական պատրաստման ոլորտներում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման ուղղությամբ իրականացվող պետական քաղաքականության ձեռքբերումների և համակարգային խնդիրների ընդհանուր գնահատականը, ինչպես նաև առաջարկություններ՝ բարձրացնելու Կառավարության գործողությունների արդյունավետությունը:

Հանդիպմանը ներկայացված պրեզենտացիան՝ ստորև, իսկ այլընտրանքային հետազոտությանը կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով

Presentation_Education_Beijin +25.pdf

Բարձրաձայնված հիմնահարցեր, խնդիրներ

- Կրթական համակարգը նպատակաուղղված չէ սովորողների և ուսանողների կողմից գենդերային հավասարության նորմերի և սկզբունքների ընկալմանը, գենդերային կարծրատիպերի հաղթահարմանը:
- Թեպետ օրենսդրական մակարդակում կրթության ոլորտում խտրականությունը բացակայում է, սակայն կա գենդերային թաքնված խտրականություն, պահպանվում է «թաքնված ուսումնական պլանը»:
- Կրթության ոլորտում ընդունվող ծրագրերը գենդերային ուղղորդում չեն անցնում, հաճախ գենդերային կույր են: Կրթական բոլոր մակարդակների ծրագրերում գենդերային հավասարությանն ուղղված բաղադրիչը ներառված չէ, դասագրքերը, ուսումնառության նյութերը գենդերային կարծրատիպերից զերծ չեն, գենդերային բռնության նկատմամբ անհանդուժողականություն ձևավորող թեմատիկան մշակված և ներդված չէ:
    - օրինակ, պատմության դասագրքերում արական սեռի են կերպարների 94%-ից ավելին, հայ գրականության՝ 80% (Օսիպով, Սարգիզովա, 2015): Ավագ դպրոցի «Հայոց պատմության» դասագրքերում քանակապես տղամարդկանց կերպարները մոտ 30 անգամ գերազանցում են կանանց կերպարները: Կանանց կերպարները կազմում են բոլոր կերպարների ընդամենը 3%-ը: Տղամարդկանց պատկերող նկարները 7 անգամ գերազանցում են կանանց պատկերող նկարներից: Որպես կանոն, տղամարդկանց պատկերող նկարները ասոցիացվում են իշխանության, ուժի, տիրապետության հետ:
    - Արդյունքում սովորողների գիտակցության մեջ ձևավորվում է միայն ակտիվ, նվաճող, պաշտպանող, ստեղծագործող տղամարդու կերպարը: Կարծիք է ձևավորվում, թե

կանայք մշակույթում որևէ ներդրում չեն ունեցել և չունեն: Կանայք հիշատակվում են միայն այն դեպքում, երբ հանդես են գալիս տղամարդուն՝ հայրենիքի պաշտպանին հատուկ գործառույթներով:

- Նույնիսկ բարձրագույն կրթության ոլորտում չկա հանդուրժողություն և գենդերազգայուն միջավայր, ինչը հանգեցնում է տարբեր ամբիոններում դասավանդվող գենդերային բնույթի առարկաների կրճատմանը:

- Գենդերազգայուն մասնագիտական կողմնորոշման պրակտիկայի բացակայության հետևանքով գենդերային խտրազատումը ըստ մասնագիտությունների կրթության բոլոր մակարդակներում պահպանվում է: Որպես արդյունք Հայաստանում STEM ոլորտում կանանց ներգրավումը դանդաղ է ընթանում:
- Սուր կերպով է հանրապետությունում դրված նախադպրոցական կրթության մատչելիության հարցը: Այսօր նախադպրոցական տարիքի երեխաների մոտ 70 տոկոսը զրկված է նախադպրոցական կրթություն ստանալու հնարավորությունից: Խնդիրը կարող է լուծվել համայնքների խոշորացման շնորհիվ, եթե լուծվեն միջգյուղական ճանապարհների և տրանսպորտի հարցերը:
- Երկիրը չի ապահովել ՄԱԿ-ի Հազարամյակի մարտահրավերների շրջանակում իր վրա վերցրած պարտավորությունները կրթության տարրական, հիմնական, ավագ դպրոցի մակարդակներում:
- Թեպետ կրթության ոլորտի աշխատակիցների գերակշիռ մասը կանայք են, սակայն պահպանվող գենդերային ուղղահայաց խտրազատման հետևանքով որոշումները ընդունվում են տղամարդ պաշտոնյաների կողմից:
- Չի ապահովված կանանց համար կրթության շարունակականության հնարավորությունը: Ներդրվում է դայակի ինստիտուտը, սակայն ծրագիրը նոր է և արդյունքները դեռ չեն երևում:

<u>Առաջարկություններ</u>

Ազգային ժողովին

- Ամրագրել կրթության ոլորտում սեռի սկզբունքով խտրականության եզրույթի սահմանումը ոլորտը կարգավորող «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներում /քանի որ դա կնպաստի նաև կրթության հանրույթի տեղեկատվության բարձրացմանը/, համաձայնեցնելով այն Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին ՀՀ օրենքի ոգուն:
- Իրականացնել կրթության բնագավառի օրենսդրության և այլ իրավական ակտերի գենդերային ուղղորդում:

- Կառավարությունից պահանջել, որ խորհրդարան ներկայացվող օրինագծերն ու ծրագրային փաստաթղթերը պարտադիր գենդերային ուղղորդում անցնեն, որը հիմնված կլինի համապատասխան ոլորտի գենդերային վերլուծության և սեռի սկզբունքով տարանջատված վիճակագրության վրա:
- Ուշադրության կենտրոնում պահել կրթության բնագավառին վերաբերող Պեկինի Գործողությունների ծրագրի իրագործումը և դրա հետ կապված խնդիրները:

- Խորհրդարանը կարող է դաշտ ստեղծել կրթության գենդերային օրակարգի քննարկման համար, պարբերաբար կազմակերպել խորհրդարանական լսումներ և փորձագիտական քննարկումներ նվիրված կրթության ոլորտում կանանց խնդիրներին:
- Այն կարող է օրինակ ծառայել կառավարության և մյուս մարմինների համար ներառելով գենդերային պրոբլեմատիկան օրինաստեղծ գործընթացներում:

ՀՀ Կառավարությանը

- Կրթությունը պետք է դիտարկել, որպես քաղաքացու սահմանադրական իրավունք, որպես ռազմավարական արժեք: Այսօր ցավոք այդ գիտակցումը և մոտեցումը չկա: Պետք է փոխել կրթության վերաբերյալ ընկալումները: ՀՀ-ում այսօր կրթական շատ խնդիրներ լուծվում են ՀԿ-ների կողմից՝ ոչ ֆորմալ կրթության միջոցով:
- Կրթության ոլորտի բոլոր ենթաօրենսդրական ակտերը պետք է գենդերային ուղղորդում անցնեն:
- Անհրաժեշտ է մշտադիտարկել ՀՀ գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարության իրականացումը գենդերային փորձագետների ներառմամբ:
- Անհրաժեշտ է գենդերային բաղադրիչը ներառել պետության կողմից ֆինանսավորվող գիտական հետազոտությունների թեմատիկայում:
- Քանի որ ՈԱԱԿ հանրապետությունում շարունակաբար իրականացնելու է քոլեջների և բուհերի հավատարմագրում և նախատեսվում է ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների վերանայում, անհրաժեշտ է դրանցում ավելացնել գենդերային չափորոշիչը:
- Անհրաժեշտ է ապահովել հանրակրթական դպրոցների, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրենների, փոխտնօրենների և ուսուցիչների վերապատրաստման ծրագրերի գենդերային փորձաքննություն, գենդերային մոդուլներով վերապատրաստմանը ներգրավել գենդերային փորձագետների:

- Մասնագիտական կողմնորոշման ծրագրերը պետք է լինեն գենդերային զգայուն, այդ պատճառով այդ ոլորտով զբաղվող բոլոր պատասխանատուները պետք է անցնեն գենդերային մոդուլներով վերապատրաստում:
- Նոր մշակվող կրթության չափանիշները, ուսումնա-մեթոդական համալիրները, դասագրքերի նախագծերը պետք է գենդերային ուղղորդում անցնեն:
- Հասարակության մեջ լայնորեն քննարկումներ ծավալել STEM բնագավառներում ուսման և կարիերայի օգուտների շուրջ, խրախուսել աղջիկներին խորացնել իրենց հետաքրքրվածությունը մաթեմատիկայով և բնագիտական առարկաներով:
- Ճկունացնել միջնակարգ կրթության համակարգը հնարավորություն ստեղծելով ուսումը չավարտած աղջիկներին շարունակել կրթությունն աշխատելու հետ զուգահեռ:
- Իրականացնել աշխատանքներ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հետ, քանի որ այս ԲՈՒՀ-ին է վստահված կրթության ապահովման մի մեծ բաղադրիչ:
- Աշխատանքներ իրականացնել բարձրացնելու ուսուցիչների զգայունությունը գենդերային հիմնահարցերի վերաբերյալ: Կրթական չափորոշիչները շատ կարևոր են, բայց ուսուցիչների մեծ մասը չգիտեն, թե ինչպես մատուցել նյութը:
- Մշակութը ծառայեցնել, որպես գենդերային հինահարցերի լուծման, գենդերային կարծրատիպերի հաղթահարման միջոց. խրախուսել կանանց մասին ֆիլմերի պատրաստումը, հեռուստաթերում կին գործիչների մասին նյութերի ցուցադրությունը: Սակայն այս գործընթացում ցուցաբերել զգայուն մոտեցում, որպեսզի չվերարտադրվեն կարծրատիպեր:

Այս ուղղությամբ իրականացվող աշխատանքներ. ներկայացրեց ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ՝ տիկին Ժաննա Անդրեասյանը՝ նշելով.

- Կրթության ոլորտում կանանց իրավունքների և դրանց առաջմղման օրակարգը ամենակարևոր հարցերից է և հատկապես դրա առնչությունը տեսնում ենք հանրակրթության բովանդակության փոփոխության այս փուլում:

- Առանձնահատուկ ուշադրության կարիք ունի համավարակի այս ժամանակաշրջանում հանրային ազդեցությունների դիտարկումը և հատկապես՝ գենդերային կտրվածքով: Ասիական զարգացման բանկի հետ համագործակցության շրջանակներում սոցիալ-հոգեբանական աջակցության ծառայություն է նախատեսվում համավարակի պայմաններում ուսուցիչների, աշակերտների, ծնողների համար և նախատեսվում է գործարկել թեժ գիծ:

- Հանրակրթության բովանդակային փոփոխությունների շրջանում առանձնահատուկ ուշադրությաուն են արժանացել նոր չափորոշիչներով գենդերային փորձաքնության հետ առնչվող հարցերը, ինչպես նաև գենդերային թեմատիկայով պետական ռազմավարությանն առնչվող հարցերը: Մասնավորապես եղել են նաև առանձնացված վերապատրաստումներ չափորոշիչները մշակող փորձագետների համար՝ Եվրոպայի խորհրդի աջակցությամբ կազմակերպված, որպեսզի մենք ունենանք գենդերային տեսանկյունից զգայուն բովանդակություն: Չափորոշիչները մշակող փորձագետների մասով

կարևորվում են նաև այնպիսի փոփոխություններ, որոնք վերաբերում են փորձառությանը՝ կանանց կերպարներն առանձնացնելու և ներկայացնելու գործում։

- Գենդերային հիմահարցերը միշտ մանիպուլացվում են՝ նշելով, որ դա արտաքին օրակարգ է։ Այնինչ, մենք ուզում ենք հղում տալ մեր ավանդականին, մատնանշելով, որ մենք ունենք գենդերային հավասարության բազմաթիվ օրինակներ սկսած իրավունքի պատմությունից և միջնադարյան իրավունքի վկայություններ։

- Կոմունիկացիոն ռազմավարության հետ կապված ապատեղեկատվության ծավալը շատ մեծ է։ Դրա վառ օրինակ են սեռական դաստիրակության թեմայով առարկայի ներմուծման վերաբերյալ խոսակցությունները։ Նախարարությունը կոմունիկացիոն ռազմավարության հետ կապված համագործակցում է մասնագետների հետ։ Նոր փուլով կլինեն քննարկումներ մասնագիտական ուսուցչական խմբերի հետ։